

ՀՏԴ 330.5Տնտեսագիտություն**Միհրան ԹԱԴԵՎՈՍՅԱՆ****ԱրՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի****ֆինանսահաշվային ամբիոնի ասիստենտ****E-mail: Mihran.tadevosyan.93@mail.ru**

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ

«Հարստություն» հասկացությունը մարդկությանը հետաքրքրել է շատ վաղ ժամանակներից: Հին մտածողներից սկսած մինչև մեր օրերը խոշոր մտածողները և գիտնականները չեն դադարում փնտրտությունները հարստության իրական աղբյուրների որոնման ուղղությամբ: Պատահական չէ, որ հենց հարստության աղբյուրի փնտրտությամբ ըստ էության ծնեց տնտեսագիտությունը որպես գիտություն:

Հոդվածում ներկայացված են հարստության վերաբերյալ տարբեր մոտեցումները՝ սկսած հույն փիլիսոփա Արիստոտելից մինչև ներկա ժամանակաշրջանը: Մոտեցումների պարզաբանմամբ և համադրմամբ ներկայացվում է հարստության հասկացության էվոլյուցիան և ժամանակաշրջանի ազդեցությունը դրա ընկալման վրա:

Բանալի բառեր՝ հարստություն, մերկանտեիզմ, ֆիզոկրատիզմ, քաղաքատնտեսություն, դասական տնտեսագիտություն, արժեքի աշխատանքային տեսություն, ազգային հարստություն, ազգային հաշիվների համակարգ, համաշխարհային բանկ:

М. Тадевосян

ТЕОРЕТИЧЕСКИЕ АСПЕКТЫ НАЦИОНАЛЬНОГО БОГАТСТВА

Концепция богатства интересовала человечество с очень давних времен. От древних времен до наших дней великие

мыслители и ученые не перестают искать истинные источники богатства. Не случайно именно поиски источника богатства и породило экономику как науку.

В статье представлены разные подходы к богатству, начиная от греческого философа Аристотеля и до наших дней. Путем уточнения и комбинирования подходов представлена эволюция понятия богатства и влияние времени на его восприятие.

Ключевые слова: Богатство, меркантилизм, физиократизм, политическая экономия, классическая экономическая теория, трудовая теория стоимости, национальное богатство, система национальных счетов, всемирный банк.

M. Tadevosyan

THEORETICAL ASPECTS OF NATIONAL WEALTH

The concept of wealth has been of interest to mankind since very ancient times. From ancient times to the present day, great thinkers and scientists do not stop looking for the true sources of wealth. It is no coincidence that it was the search for the source of wealth that gave rise to economics as a science.

The article presents different approaches to wealth, from the Greek philosopher Aristotle to the present day. By clarifying and combining approaches, the evolution of the concept of wealth and the influence of time on its perception are presented.

Key words: *Wealth, mercantilism, physiocracy, political economy, classical economic theory, labor theory of value, national wealth, system of national accounts, world bank.*

Ազգային հարստությունը երկրի տնտեսական հզորությունը բնութագրող կարևորագույն ցուցանիշն է: Այն ՀՆԱ ընդլայնված վերարտադրության անհրաժեշտ նյութական նախադրյալն է և բնակչության կենսամակարդակի բարձրացման կարևորագույն գործոնը:

Մարդու՝ որպես բանական էակի ծագման և զարգացման ողջ շրջանում մարդկությանը հետաքրքրող կարևորագույն հարցերից մեկը եղել և մնում է «հարստություն» հասկացությունը:

Հին աշխարհի խոշոր մտածողները իրենց աշխատություններում անդրադարձ են կատարել հարստություն հասկացությանը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ հարստությունը այդ ժամանակներից սկսած որոշիչ դեր է խաղացել ժողովուրդների կյանքում: Կարևոր հանգամանք է այն, որ հարստության գաղափարին հատկացված մեծ ուշադրությունը եղել է դեռևս այն ժամանակաշրջանում, երբ նույնիսկ տնտեսագիտությունը հազարամյակներ անց էր դառնալու գիտություն: Հարստության վերաբերյալ առաջին լուրջ ուսումնասիրությունները հանդիպում ենք հույն հայտնի մտածող Արիստոտելի աշխատություններում: Արիստոտելը պնդում էր, որ գոյություն ունեն երկու գիտություններ՝ էկոնոմիկա և հարստացման արվեստ: Ըստ Արիստոտելի՝ անհրաժեշտ են և մարմնական առողջություն, և՛ որոշակի կենսապայմաններ: Այս բարիքներից Արիստոտելը մատնանշում է հարստությունը՝ որպես կյանքի համար անհրաժեշտ պայման: Նա հարստությունը համեմատում է այն գործիքների հետ, որոնք մենք ընտրում ենք որպես նպատակին հասնելու միջոց: Հարստություն բառի ճշգրիտ իմաստով Արիստոտելը հասկանում է «կյանքի համար անհրաժեշտ և հասարակական և կենցաղային հաղորդակցության համար օգտակար տնտեսական ապրանքների կուտակումը»¹ :

Արիստոտելը իսկական հարստությունը համարում է առաջին անհրաժեշտության ապրանքներից բաղկացած հարստությունը²: Մեծ մտածողի հայացքները մեծ ազդեցություն են ունեցել հետագա տնտեսագիտական մտքի զարգացման գործում, մասնավորապես այդ ազդեցությունը ակնառու կերպով տեսանելի է միջնադարյան հայտնի մտածող Թոմաս Աքվինացու աշխատություններում: Ըստ Աքվինացու՝ ֆիզիկական աշխատանքով են ստեղծվում հասարակության գոյամիջոցները: Թ. Աքվինացին մեծ ուշադրություն է դարձրել մասնավոր սեփականությանը, որը համարում է տնտեսության հիմքը, և մարդը ի ծնե օժտված է հարստություն ձեռք բերելու իրավունքով: Այստեղից եզրակացնում է, որ պահանջմունքների բավարարման համար ձեռք բերվող սեփականությունը բնական և մարդկային կյանքի անհրաժեշտ պայմանն է³:

Սակայն վերը թվարկված մոտեցումները որքան էլ որ հետաքրքրություն են ներկայացնում հարստության երևույթի բացատրման սկզբնաղբյուրների փնտրման տեսանկյունից, այդուհանդերձ դրանք տեսակետային տիրույթում են: Տնտեսագիտության բուն պատմությունն սկսվում է մերկանտելիստներից, որոնք յուրովի ներկայացրին հարստության

¹ https://bookap.info/okolopsy/aristotel_nikomahova_etika/ 1

² Տես՝ **Գիքակոսյան Գ.**, *Տնտեսական ուսմունքների պատմություն*, 2004թ. էջ28:

³ Տես՝ ն.տ. էջ38:

ստեղծման հիմնախնդրի լուծումը և դա պատահական չէր: Աշխարհագրական մեծ հայտնագործությունները առաջ բերեցին տնտեսական կապերի և միջազգային առևտրի բուռն աճ հենց 15-րդ դարում էլ մերկանտեիզմը ծագել է որպես տնտեսագիտական ուղղություն և գերիշխող դիրք է զբաղեցրել գրեթե երեք դար: Մեկանտեիզմի դպրոցի ամենաականառու ներկայացուցիչներն են հանդիսանում Թ. Մենը, Ա. Մերքան, Ա. Մոնկրետիենը: Մերկանտեիստները, հարստությունը նույնականացնելով ազնիվ մետաղների հետ, գտնում են, որ այս կամ այն երկրի հարստացումը հնարավոր է միայն այլ ազգերի բարեկեցության նվազման հաշվին¹: Ժամանակակից տնտեսագետների կարծիքով՝ մերկանտեիստական դպրոցի գաղափարները բազմաթիվ թերություններ ունեն, որոնք պայմանավորված են այն հանգամանքներով, որ մեկ պետության հարստացումը կարող է լինել նաև ոչ մեկ այլ պետության աղքատացման հաշվին, որի հետ առևտուր են անում, որ միջազգային տնտեսությունը աճում է և որ հարստության կուտակումը չի սահմանափակվում միայն առկա հարստության բաժանման հաշվին, այլ ստեղծվում է նոր հարստություն: Մերկանտեիստները առաջինն էին, որ հարստությունը ներկայացրին ոչ թե սպառողական արժեքի, այլ արժեքի կամ փոխանակային արժեքի տեսքով, որն առաջնաբայ քայլ էր տնտեսագիտության մեջ: Մերկանտեիզմի տնտեսական քաղաքականությունը կարևոր դեր է խաղացել կապիտալի նախասկզբնական կուտակման ընթացքն արագացնելու և առևտրային կապիտալի գործունեությունն աշխուժացնելու գործում: Այս իմաստով, ճիշտ է նկատել տնտեսագիտության պատմության նշանավոր գիտակ Ի. Շումպետերը,² որ մերկանտեիզմը ոչ այնքան գիտական ուղղություն է, որքան գործնական քաղաքականություն, հետևաբար նրա նշանակությունը պետք է գնահատվի հենց այս տեսանկյունից:

Ուսումնասիրությունները վկայում են, որ տնտեսագիտությունը ծնվել է հարստություն ռաջացման էությունը բացատրելու նպատակով: Նոր գիտության արարողներին չէր բավարարում այն գաղափարը, թե հարստությունը փողն է, իսկ դրա աղբյուրը՝ առևտուրը: Նրանք, ելնելով իրականությունից, կռահում էին, որ երկիրը հարուստ է իր ստեղծած արդյունքներով, ուրեմն՝ հարստության աղբյուրը պետք է փնտրել արտադրության մեջ: Այդ գաղափարի առաջին հեղինակներից մեկը եղել է անգլիական քաղաքատնտեսական դպրոցի ներկայացուցիչ Վիլյամ

¹ Տե՛ս ՝ **Մարկոսյան Ա.**, *Միջազգային տնտեսական հարաբերություններ*, 2012թ., 1-ին մաս, էջ 143:

² Տե՛ս ՝ **Շումպետեր Ի.**, *Տնտեսական զարգացման տեսություն*, 1982, էջ 134:

Պետտին(1623-1687)¹: Վ. Պետտին՝ որպես դասական քաղաքատնտեսության հիմնադիրներից մեկը, հարստության ստեղծումը տեսնում էր նյութական արտադրության ոլորտում: Դասական քաղաքատնտեսության մյուս խոշոր ներկայացուցիչ Պ. Բուազիլբերը առաջ քաշեց այն գաղափարը, որ ազգի հարստությունն կազմված է գյուղատնտեսական ապրանքների զանգվածից, ընդ որում՝ վերջինիս արտադրությունը պետք է խրախուսվի: Ըստ էության, հերքվում են մերկանտելիստական տեսության հիմնական գաղափարները, փողի և դրա դրսևորման ձև հանդիսացող ոսկու և արծաթի դերը որպես հարստության աղբյուրի, և առաջ է քաշվում փողի՝ որպես զուտ շրջանառության միջոցի դեր կատարել գործիքի ֆունկցիան:

Հաջորդ տնտեսագիտական դպրոցը, որը ուսումնասիրության է ենթարկել հարստության գաղափարը, եղել է ֆիզիոկրատիզմը: Ֆիզիոկրատները գտնում էին, որ հարստությունը առաջանում է սպառողական արժեքներից: Ընդհանրապես, ֆիզիոկրատների ծառայություններից մեկն էլ այն է, որ հավելյալ արդյունքի առաջացման հետագոտություններն անմիջապես տեղափոխեցին բուն արտադրության մեջ և դրանով իսկ հիմք դրեցին կապիտալիստական արտադրության վերլուծության համար: Ֆիզիոկրատական դպրոցի ամենաակնառու ներկայացուցիչը Ֆրանսուա Քենեն է, ում տնտեսագիտական տեսությունների շարքում կենտրոնական տեղ է գրավում «զուտ արդյունքի» մասին ուսմունքը: Վերջինս նրան հնարավորություն է տվել իրականացնելու կապիտալի, արտադրողական և անարտադրողական աշխատանքների վերլուծությունը, որոշելու բնակչության յուրաքանչյուր խմբի տեղն ու դերը հասարակության մեջ: Քենեն նշում էր, որ «զուտ արդյունքը» ստեղծվում է գյուղատնտեսության բնագավառում և հանդիսանում է հասարակության զուտ եկամուտը: Քենեի տեսությունների շարքում իր ուրույն տեղն ունի կապիտալի մասին ուսմունքը: Նա առաջիններից էր, որ իրարից տարբերեց «փող» և «կապիտալ» հասկացությունները, հիմք դրեց կապիտալի՝ հիմնական և շրջանառու մասերի բաժանմանը:

Սակայն մերկանտելիստական տնտեսագիտական ուսմունքին ամենամեծ հարվածը հասցրին դասական տնտեսագետները և մասնավորապես, նրա հիմնադիր անգլիացի տնտեսագետ Ադամ Սմիթը: Ադամ Սմիթի² աշխատություններում գլխավոր գաղափարը կայանում էր նրանում, որ ազգի հարստության մակարդակը պայմանավորված է ոչ միայն նրանով, թե ինչքան ոսկի և արծաթ է կուտակել ազգը, այլև նրանում, թե ազգը որքանով է ունակ ստեղծելու վերջնական ապրանքներ և ծառայություններ:

¹ Տես՝ *Գիրակոսյան Գ., Տնտեսական ուսմունքների պատմություն, 2004թ., էջ 103:*

² Տես՝ *Սմիթ Ա., Ազգերի Հարստությունը, 1776թ., էջ 42:*

Այդտեղից հետևում է , որ հարստության հիմքը արտադրողականության զարգացումն է աշխատանքի բաժանման և կոոպերացիայի հաշվին¹: Ադամ Սմիթի գլխավոր աշխատությունը՝ «Ազգերի հարստությունը», չնայած ընդգրկում է տնտեսագիտության տարբեր բնագավառներ, սակայն, ըստ էության, մի ամբողջական գիծ է, հասարակության հարստության ստեղծման և բաշխման օրենքների ուսումնասիրություն, որի արդյունքում փաստորեն տրվում են տնտեսական գիտության ընդհանուր հիմքերը: Հասարակության հարստությունը, ըստ Ա. Սմիթի, ստեղծվում է նյութական արտադրության ոլորտի ճյուղերում ծախսված աշխատանքի շնորհիվ: Աշխատանքը դիտելով որպես հարստության աղբյուր՝ երկրի հարստության ծավալը պայմանավորող գործոն է համարում «տվյալ ժողովրդի տարեկան աշխատֆոնդը, որը նրան ապահովվում է անհրաժեշտ կենսամիջոցներով»: Ազգի հարստության ստեղծման հետ կապված՝ Սմիթը սահմանազատել է արտադրողական և անարտադրողական աշխատանքները՝ հարստության աղբյուր համարելով միայն արտադրողական աշխատանքը: Արտադրողական է համարվել այն աշխատանքը, որը մեծացնում է վերամշակող նյութերի արժեքը, ինչպես նաև մարմանվորվում է որևէ առարկայի կամ ապրանքի մեջ, որն աշխատանքն ավարտելուց հետո շարունակում է գոյություն ունենալ և կարող է փոխանակվել կամ վաճառվել: Զարգացնելով Վ. Պետիի արժեքի աշխատանքային տեսությունը, որը պարզապես ներկայացված էր առանձին դրույթներով ու ձևակերպումներով, Ա. Սմիթըն այն դարձրեց ամբողջական տնտեսագիտական ուսմունք: Սմիթը գտնում էր, որ «աշխատանքն արժեքի միակ համընդհանուր ու ճշմարիտ չափանիշն է, որով մենք կարող ենք համեմատել տարբեր ապրանքների արժեքները ամեն ժամանակ և ամենուրեք» :

Աշխատանքն արտադրողականի և անարտադրողականի սահմանազատելու Ա. Սմիթի մոտեցումը հետագայում ավելի է ամրապնդվել Կ. Մարքսի կողմից: Մարքսյան տնտեսագիտությունը նույնպես հարստության ստեղծման ոլորտ է համարել նյութական արտադրությունը, սակայն կարևորել է ոչ թե բուն արտադրության գործընթացը, այլ այդ գործընթացում մարդկանց միջև առաջացող արտադրական հարաբերությունները և դրանց զարգացման օրենքներն ու օրինաչափությունները: Կ. Մարքսը կատարելության հասցրեց արժեքի աշխատանքային տեսությունը, նշելով, որ արժեքի նախահումքը, սուբստանցը աշխատանքն է, և արժեքի մեծությունը չափվում է ապրանքի արտադրության վրա կատարված հասարակականորեն անհրաժեշտ աշխատանքի ծախսումներով: Այս ծախսումներն, ըստ Մարքսի,

¹Տես՝ *Միխայիլովսկին Ա., Շիմկո Պ., Միջազգային տնտեսագիտություն, 2008թ., էջ 42:*

արտահայտվում են հասարակականորեն անհրաժեշտ աշխատաժամանակով, որը հարկավոր է ծախսել արտադրության միջին տեխնիկական զինվածության, աշխատողի միջին հմտության, աշխատանքի միջին ինտենսիվության պայմաններում որևէ ապրանք արտադրելու համար:

Ազգային հարստության ուսումնասիրությունները ավելի ծավալուն դարձան 20-րդ դարի 20-ական թվականները, երբ առաջ քաշվեցին ազգային հարստության էության և կազմի, եկամուտների և արդյունքների հետ դրա փոխադարձ կապերի և քանակական գնահատման մեթոդների հարցերը: Չնայած տարբեր երկրների տնտեսագետների կողմից ազգային հարստության հաշվարկման երեքդարյա փորձին՝ այնուամենայնիվ, ոչ բոլոր հիմնահարցերը լուծված համարվեցին: Դրանք առաջին հերթին վերաբերում էին ազգային *հարստություն* հասկացության բնութագրմանը, նրա տարրերի հաշվարկման ու գնահատման մեթոդների ընտրությանը և հաշվարկներին¹:

20-րդ դարում, երբ ստեղծվեց Ազգային հաշիվների համակարգը, ազգային հարստության ցուցանիշը ներառվեց համակարգի մեջ: Ներկայումս այն հաշվարկվում է Համաշխարհային բանկի կողմից առաջարկվող մեթոդաբանությամբ, ըստ որի՝ ազգային հարստությունը կազմված է չորս բաղադրիչներից՝ բնական կապիտալ, մարդկային կապիտալ, արտադրված կապիտալ և գույտ արտաքին ակտիվներ²:

Այսպիսով, հիմք ընդունելով վերը նշվածը՝ փաստում ենք, որ հարստության գաղափարը մարդկային հասարակության զարգացման ողջ ընթացքում ուսումնասիրվել է ժամանակի խոշոր մտածողների կողմից: Այն առանցքային դեր է ունեցել տնտեսագիտական դպրոցների ուսումնասիրության ուղղություններում: Ճիշտ է, այսօր կարող ենք չհամաձայնվել մերկանտելիստների, ֆիզիոկրատների կամ քաղաքատնտեսության ներկայացուցիչների մոտեցումների հետ, սակայն պետք է հաշվի առնենք այն հանգամանքը, որ տվյալ ժամանակաշրջանի համար նրանց կատարած ուսումնասիրություններն ունեն բացառիկ արժեք և հիմք են ծառայել ներկայիս կատարելագործված մոտեցումների համար:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, տ.գ.դ. Տ.Ն.Մանասերյանը:

¹ Տես՝ **Հակոբյան Հ.Մ.**, Ազգային հարստության վիճակագրություն 2004թ., էջ 4:

² *The Changing Wealth of Nations 2018. Building a Sustainable Future.*